

Ազերի Երիտասարդական Զինեալ Խումբեր Կը Մեկնին Արցախ

Իրողութիւնը յայտնի էր արդէն, որ Պաֆուի իշխանութիւնները լուռ կերպով կը փաջայերէին ազերի երիտասարդներ, որ մեկնին Արցախ հակահայ գրգռութիւններու եւ յարձակումներու մասնակցելու համար: Այժմ այդ իրողութիւնը իր կողմէ կը հաստատուի ըրեալան «Կիւնայարն» բերրի քղբակից Արտան Զէնթիւրֆ, որ նոր վերադարձած է Պաֆուէն:

Թուրք լրագրողը հայերու հաշտոյն քառական առաապելներ եխսելէ ետք, կը գրէ. «Տրուած ըլլալով, որ Ատրպէյտանի Համայնաժար Կուսակցութիւնը շօշափելի գործ մը չէ կրցած տեսնել, ատրպէյնանցիները «Ժողովրդական Ճակատ» մը կազմեցին
(Շար.ը տեսնել 13րդ էջ)

ԱԶԵՐԻ ԲԱՆԱԿ

(Շար. առաջին էջէն)

Եւ սկսան զօրակոչի ենթարկել իրենց երիտասարդները, եւ խորհրդային բանակէն անկախ՝ տարբեր բանակ մը կազմել: Այդ բանակէն մէկ մասը արդէն իսկ սկսած է ղրկուիլ Լեռնային Ղարաբաղ:

Ատրպէյճանի ամէն կողմը երիտասարդները կամաւոր կերպով կ'արձանագրուին զինուորական ցուցակներու, որոնք «Տէսթ» կը կոչուին»:

Հակառակ համալսարաններու բացման մէկ ամիսով յետաձգումին, «երիտասարդները խումբ առ խումբ Պաֆու կուգան: Կարգ մը երիտասարդներ, զինուելէ ետք, Ղարաբաղ գացին: Արդարեւ, այդ շրջանին մէջ հիմնուած 'Ատրպէյճանի Թուրքերու միլիցիային կազմակերպութիւն'ը Գարաչօյ-

լու ֆաղափին մէջ գերի վերցուց 7 հայ միլիթաններ, որոնք ատրպէյճանցիներու վրայ յարձակած էին: Անոնք այժմ ժողովրդական ձակատի ձեռքը կը գտնուին»:

Միւս կողմէ կը հաղորդուի, որ ժողովրդական ձակատի շղթայագերծած գործադուլը, որ իր մէջ առաւ նաեւ հանրապետութեան կարգ մը ֆարիւղի գտարաններուն գործաւորները, վերջ գտած է, իշխանութիւնները խոստացած ըլլալով նանչնալ «նակատ»ին օրինաւորութիւնը, ինչպէս նաեւ անոր այն գլխաւոր պահանջը, որ կուսակցութիւնը տէր պիտի կանգնի Արցախի վրայ իր գերիշխանութեան, ու պիտի չհամաձայնի որ Մարզը վարչականօրէն կապուած մնայ Մոսկուայի: